

## ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ ԼԱՄԲՐՈՆԻ ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Արամ Հովհաննիսյան*

Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը հայոց պատմության ամենահետաքրքիր և կարևոր շրջաններից մեկն է: Նրանում հատկապես կարևոր նշանակություն ունի Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանի մի շարք կարևոր խնդիրների հետազոտությունը, որոնք մինչև օրս էլ աղբյուրների սակավության պատճառով բավարար հետազոտության չեն ենթարկվել և մի շարք հարցերի սպառիչ պատասխաններ չեն տրվել: Մասնավորապես մեր ներկա հետազոտությունը նվիրված է Լևոն Մեծագործի և Լամբրոնի տեր Հեթումի հարաբերությունների պատմությանը, որոնք միշտ չէ որ հարթ էին ընթանում և դա մի խնդիր էր, որը հուզում էր ողջ հայոց թագավորությանը:

Հայտնի է, որ թագավորության հռչակումից հետո Լևոն Մեծագործի առջև ծառայեց էին մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում էին երկրի ներքին քաղաքականությանը և դրանք շուտափույթ լուծման կարիք էին զգում:

Հայոց արքայի համար հատկապես կարևոր նշանակություն ուներ կենտրոնախոյս ավատատերերին իրեն ենթարկելը: Հետազոտող Մ. Օրմանյանը նշում է հետևյալը. «Հայ իշխաններից գլխավորներն էին Լամբրոնի տեր Հեթումը և Պապերոնի բերդի տիրակալ Բակուրան իշխանը: Բնականաբար Պապերոնի իշխան Բակուրանի հետ հարաբերություններում Լևոն Մեծագործը որևէ խնդիր չունեց, քանի որ նա Լևոն արքայի մորեղբայրն էր, բայց նույնը չեղավ Լամբրոնի տեր Հեթումի կողմից»<sup>1</sup>:

Այսպես, առաջին կենտրոնախոյս հակումներ ձգտող իշխաններից մեկը Լամբրոն բերդի տիրակալ Հեթում իշխանն էր, որի ձեռքում էր գտնվում այդ կարևոր ամրոցը<sup>2</sup>: Նշյալ բերդը Կիլիկիայի հայկական թագավորության համար ուներ առանձնահատուկ նշանակություն, քանի որ այն և անմատչելի էր, և Լամբրոնի տերերը՝ Հեթումյանները միշտ չէ, որ հնազանդվում էին Ռուբին-

<sup>1</sup> Մ. Օրմանյան, հ. Ա, սյուն 1816:

<sup>2</sup> Լամբրոնը Հայկական Կիլիկիայի ամենանշանավոր և պատմական հիշատակումներով բերդերից մեկն է, որը գտնվում է Տարսուսից 145 կիլոմետր հեռավորությամբ դեպի արևմուտք, Մ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 67:

յաններին: Եվ այդ գործը բավականին բարդ էր: Ճիշտ է, նրանք մտնում էին Կիլիկիայի հայկական թագավորության կազմի մեջ, սակայն գտնվում էին «կիսանկախ» վիճակում և բյուզանդասեր էին, ինչը և վնաս էր Կիլիկյան Հայաստանին և իհարկե չէր կարող հանդուրժել ժամանակի ամենանշանավոր գործիչներից մեկը՝ Լևոն Մեծագործը: Բացի այդ, ինչպես նշում է Մ. Հովհաննիսյանը, որ թեև Լևոնը իր թագավորության սկզբնական շրջանում խոհեմությամբ վարվեց Հեթումյանների հետ, սակայն չէր կարող հանդուրժել նրանց հունականությունը և իր հանդեպ բռնած հպարտ դիրքը<sup>1</sup>: Լ. Տեր-Պետրոսյանը անդրադառնալով հայոց արքայի և Հեթում իշխանի հարաբերություններին՝ կարծիք է հայտնում, որ արքան այդ քայլին գնաց քանի որ կասկածում էր Հեթումյանների հավատարմության վրա և գտնում, որ նրանք հարմար պահին նորից կարող են բացահայտել իրենց կենտրոնախույս ձգտումները<sup>2</sup>: Եվ դա իրոք այդպես էր: Տարիներ անց, Հեթումի որդի Կոստանդինը, ում հանձնեցին Լամբրոնի բերդը՝ սկսեց համագործակցել Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի հետ և բավականին մեծ վնաս հասցրեց Կիլիկիայի հայկական թագավորությանը:

Եվ հայոց արքան գործնական քայլերի է դիմում ստեղծված իրավիճակին վերջ տալու համար:

Հայտնի է, քանի դեռ Հեթում իշխանի եղբայրը՝ հայտնի կրոնական և քաղաքական գործիչ Ներսես Լամբրոնացին կենդանի էր, հայոց արքան չցանկացավ ընդհարվել վերջինիս հետ՝ անշուշտ չցանկանալով հարաբերությունները վատացնել նաև իր խորհրդականի հետ: Բայց երբ Ներսես Լամբրոնացին մահացավ, Լևոն Մեծագործը իր գործողություններում ազատ զգաց: Ճիշտ է, Հեթում իշխանը մասնակցել էր Լևոն Մեծագործի թագադրման արարողությանը, սակայն դա չփոխեց իրավիճակը:

Լամբրոնի տերերը անջատողական ձգտումներ էին դրսևորում և բյուզանդական կայսրության կողմնակից էին<sup>3</sup>: Եվ նրանց այդ կիսանկախ վիճակը կարող էր ազդել նաև Լևոն Մեծագործի հեղինակության վրա: Հայտնի է նաև, որ հայոց արքայի ազգականները նախկինում արդեն մի քանի անգամ փորձեցին գրավել այդ կարևոր ստրատեգիական ամրոցը, սակայն որևէ հաջողության չհասան:

Այսպես՝ նախ իշխան Մլեհը իր իշխանության տարիներին փորձեց գրավել այդ ամրոցը, սակայն հաջողության չհասավ, իսկ դրանից հետո՝ նրա եղբորոր-

<sup>1</sup> Մ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 75:

<sup>2</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 266:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 286:

դին՝ Ռուբեն Գ-ն, 1180-ական թվականներին շուրջ երեք տարի պաշարված պահեց Լամբրոնի անառիկ ամրոցը, բայց կրկին անարդյունք, քանի որ ըմբոստ իշխանին օգնեց Անտիոքի իշխանապետությունը<sup>1</sup>: Եվ հավանաբար անցյալում իր ազգականների կողմից թույլ տված այդ սխալները հաշվի առնելով՝ Լևոն Մեծագործը որոշեց գործել միանգամայն այլ ճանապարհով:

Այսպես, արքան քաջ գիտակցելով որ Լամբրոնի բերդը շատ անառիկ է և գործնականում գրեթե այն հնարավոր չէ ռազմական ճանապարհով գրավել, կամ այն կգրավվեր մեծ զոհերի գնով, ավելի խելացի քայլի դիմեց:

Նախ տեսնենք թե ինչ են այդ մասին հաղորդում միջնադարյան պատմիչները: Վերը նշված դեպքի մասին հայկական սկզբնաղբյուրներում տեղեկությունները շատ քիչ են և հավանաբար դա է պատճառը, որ նախկինում հետազոտողները շատ խորությամբ կանգ չեն առել այս կարևոր իրադարձության վրա:

Առաջին հեղինակներից մեկը, որ խոսում է Լամբրոնի բերդի գրավման, ինչպես նաև Լևոն Մեծագործի և Հեթում իշխանի հարաբերությունների մասին, Սամվել Անեցու երկը շարունակողն է, համաձայն որի Լևոն Մեծագործը իմաստութեամբ գործեց. «Սա իմաստութեամբ զԼամբրոն յինքն գրաւեաց<sup>2</sup>: Հավանաբար իմաստություն գործել նշելով՝ հեղինակը ի նկատի ուներ այն հանգամանքը, որ ի տարբերություն իր նախորդների, Լևոն Մեծագործը ռազմական գործողություններ չծավալեց և խաղաղ ճանապարհով կարողացավ հնազանդեցնել Լամբրոնի իշխան Հեթումին: Ավաղ այլ մանրամասներ պատմիչը նշված իրադարձության մասին չի նշում, որն էլ չի կարող մեզ թույլ տալու էական պարզաբանումներ մտցնել նշված խնդրում:

Հաջորդ հեղինակը, որը նույնպես անդրադարձել է այս խնդրին՝ ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին է, նա նշում է, որ տեղի իշխանը ապստամբել էր Լևոնի դեմ և հայոց արքան շատ ջանաց ապստամբին նվաճել բայց չկարողացավ<sup>3</sup>: Ցավոք հեղինակը հստակ չի նշում, թե երբ էր Լամբրոնի տերը ապստամբել հայոց արքայի դեմ և ինչ պատճառով: Շատ հավանական է, որ ինչ-որ դեպք տեղի ունեցած լիներ Լևոն Մեծագործի թագադրումից հետո, քանի որ հայոց արքայի թագադրության հանդեսին ի թիվս այլ հյուրերի մասնակցել էր նաև Հեթում իշխանը, և եթե Լևոնը ցանկանար, ապա կարող էր այդ ժամանակ Տարսոն քաղաքում ձերբակալել անհնազանդ իշխանին: Կար-

<sup>1</sup> Վահրամ Ռաբունի, էջ 212:

<sup>2</sup> Սամվել Անեցի, էջ 441:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 286-287:

ծում ենք, որ հեղինակի կողմից ապստամբության հիշատակումը կայանում էր նրանում, որ Լամբրոնի տեր Հեթումը ժամանակ առ ժամանակ գործակցում էր բյուզանդական կայսրության և Անտիոքի դքսության հետ, որը չէր կարող ընդունվել Լևոն Մեծագործի կողմից՝ քանի որ եթե Կիլիկիայի հայկական իշխանությունը վերածվել էր թագավորության, ուստի Լամբրոնի տեր Հեթումը առանց արքայի թույլտվության իրավունք չուներ համագործակցել թե՛ բյուզանդական կայսրության և թե՛ որևէ այլ պետության հետ: Այնուհետև շարունակելով իր միտքը՝ հեղինակը նշում է, որ հայոց արքան խնամիրություն հաստատելու պատրվակով խաբեց վերջինիս և հավաստիացրեց, թե իբր իր եղբոր դստերը տալիս է նրա որդի Օշինին կնուցելու: «Ապա յետոյ խորամանկութեամբ խաբեալ զնա խնամութեան աղազաւ, որպէս թէ տացէ զդուստր եղբօր իւրոյ՝ որդույ նորա՝ Օշնի ի կնուցիւն, ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, ետուն ի նա զամրոցն»<sup>1</sup>: Այնուհետև շարունակելով՝ հեղինակը նշում է, որ վերջնելով ամրոցը արքան այնտեղ դրեց իր մորը՝ տիկնանց տիկնոջը և «անեծք» գրեց, որ այլևս այն չհանձնվի որևէ իշխանի և այն միայն արքունի պետք է լինի<sup>2</sup>:

Փաստորեն, ի տարբերություն Սամվել Անեցու երկը շարունակողի՝ Կիրակոս Գանձակեցին ավելի շատ մանրամասներ է հաղորդում: Վերոնշյալ իրադարձության մասին ամենից մանրամասն տեղեկություններ հանդիպում ենք պատմիչ Սմբատ Սպարապետի մոտ, ով միակն է միջնադարյան սկզբնաղբյուրների մեջ, որ բավականին խորությամբ պահպանել է վերը նշված դեպքերի մանրամասները: Նա նշում է, որ «Եւ խորհէր Լևոն իմաստութեամբ, փետտել զթեւս նոցա, և ցածուցանել զբարձրայօն հպարտութիւն նոցա: Խոսէր ընդ Հեթում՝ որդի Օշին բանս ախորժականս մտաց նորա. կամք են իմ առնել ընդ քեզ կապակցութիւն սիրոյ, և տալ զդուստր եղբօր իմոյ Ռովբինի՝ զՖիլիպն ի կնուցիւն որդույ քո երիցա գունի Օշնի»<sup>3</sup>: Այնուհետև հեղինակը շարունակելով վերը նշված դեպքերի մեկնաբանությունը՝ նշում է, որ Տարսոն քաղաքում սկսում են պատրաստվել հարսանյաց հանդեսին ու երբ որ Հեթում իշխանը իր ընտանիքի անդամների հետ ժամանեց Տարսոն, ապա նրանց բոլորին էլ արքայի հրամանով ձերբակալեցին, որից հետո թագավորական զորքերը հեշտությամբ գրավեցին Լամբրոնի անառիկ բերդը<sup>4</sup>: Միջնադարյան մյուս պատմիչների մոտ վերը նշված թեմայի մասին տեղեկություններ չենք հանդիպում:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 211:

<sup>4</sup> Նույն տեղում:

Շատ հետաքրքիր է նաև նշել, որ հայոց արքայի կատարած գործունեության մասին հայ պատմիչները տարբեր գնահատականներ են տալիս: Այսպես, Սմբատ Սպարապետը Լևոն արքայի կատարած քայլը որակում է որպես իմաստություն<sup>1</sup>, Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը՝ նենգություն<sup>2</sup>, իսկ Կիրակոս Գանձակեցին՝ խորամանկություն<sup>3</sup>: Կարծում ենք, որ Սմբատի տված գնահատականը ավելի ճշգրիտ է, քան Սամվել Անեցու երկը շարունակողինը և Կիրակոս Գանձակեցունը, քանի որ դժվար է ընդունել Լևոնի արարքը որպես նենգություն կամ խորամանկություն այն մարդու նկատմամբ, ով հայոց պետականության հիմնադրման հենց սկզբնական շրջանից փորձեց առանց արքայի թույլտվության կապեր հաստատել հարևան պետության հետ և դրանով թուլացնել երկիրը:

Փաստորեն Լամբրոնի տեր Հեթումը ընկավ Լևոն արքայի կազմակերպած ծուղակը: Ըմբոստ իշխանը հրավիրվեց արքայի մոտ՝ իբր խնամիական կապեր հաստատելու և երբ Լամբրոնի տեր Հեթումը իր ընտանիքի անդամների հետ ժամանեց Տարսոն՝ արքան նրանց կալանավորեց, իսկ թագավորական զորքերն առանց կռվի գրավեցին այդ կարևոր ստրատեգիական բերդը: Բայց պետք է նաև նշել, որ երկկողմ թշնամական հարաբերությունները շուտով կարգավորվեցին: Եվ այդ խնդրում բավականին մեծ դեր կատարեց ամենայն հայոց կաթողիկոսը:

Կաթողիկոս Գրիգոր Ապիրատը իմանալով որ իր քեռորդուն ձերբակալել են հայոց արքայի հրամանով՝ դիմեց Լևոն Մեծագործին և հարցը խաղաղության մեջ լուծվեց:

Այսպես, Լևոն Մեծագործը ազատեց Հեթումին և իր ընտանիքի անդամներին և տվեց շատ գյուղեր և ագարակներ Բարձրբերդի շրջանի մեջ, բայց պայմանով, որ Լամբրոնի բերդը այլևս նրան չվերադարձնեն: Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին հայոց արքայի և Լամբրոնի Հեթումյանների միջև<sup>4</sup>, սակայն Հեթումը լքեց այդ գյուղերն ու ագարակները և քաշվեց վանք: Հայոց արքան իմանալով այդ մասին, որոշ ժամանակ անց նրան նշանակեց մայրաքաղաք Սսի մոտ գտնվող Դրազարկի վանքի ղեկավար, որը բավականին կարևոր և ազդեցիկ պաշտոն էր համարվում: Կրոնավոր դառնալով Հեթում իշխանը կոչվեց Հեղի Լամբրոնացի անվանումով:

<sup>1</sup> Սմբատ, Պատմություն, էջ 113:

<sup>2</sup> Սամվել Անեցի, էջ 144:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 286:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 211-212:

Ինչպես նկատում ենք, հայոց արքայի խելացի քայլի շնորհիվ Լամբրոնի Հեթումյանների հարցը լուծվեց խաղաղությամբ: Հետագայում էլ հայոց արքան շարունակեց համագործակցությունը Հեթում իշխանի հետ: Այսպես՝ 1210 թ. Հեթումը հայոց արքայի հանձնարարությամբ ուղարկվեց Արևմտյան Եվրոպա և թագ խնդրեց գերմանական կայսր Օտտոն Դ-ից և Հռոմի պապ Ինոկենտիոս Գ-ից՝ Ռուբեն-Ռայմոնդի համար: Հաջողությամբ իրականացնելով իր առաքելությունը մեկ տարի անց հետ վերադարձավ<sup>1</sup>:

Պատմագիտության տեսանկյունից շատ կարևոր է նաև ճշտել այն հարցը, թե մոտավորապես որ թվականին է տեղի ունեցել այդ իրադարձությունը: Ավաղ այս խնդրի առնչությամբ էլ միջնադարյան աղբյուրներում գրեթե տեղեկություններ չեն պահպանվել:

Սկզբնաղբյուրները, որոնք որոշակի չափով կանգ են առել այս կարևոր իրադարձության վրա, իրենց երկում հստակ կերպով չեն արձանագրել, թե կոնկրետ որ թվականին է տեղի ունեցել այդ ըմբոստ իշխանի հնազանդեցումը: Ժամանակակից գիտնականներն էլ հավանաբար հաշվի առնելով տեղեկության սղությունը գրեթե չեն խոսում այդ իրադարձության մասին: Միայն երկու հետազոտող են որոշակի տեսակետ հայտնել: Այսպես առաջինն այդ հարցին անդրադարձել է Մ. Օրմանյանը, ով վերոնշյալ իրադարձության մասին մեկնաբանելիս նշում է, որ այն տեղի է ունեցել Լևոնի թագադրության հաջորդ տարիներին<sup>2</sup>, իսկ ահա Լ. Տեր-Պետրոսյանը՝ քիչ ժամանակ անց<sup>3</sup>: Մյուս հետազոտողներն այդ մասին որևէ կարծիք չեն հայտնում: Փաստորեն երկու հետազոտողներն էլ կոնկրետ տեսակետ չեն հայտնում նշյալ դեպքի վերաբերյալ: Վերը նշյալ խնդրի պարզաբանմանը կարող է օգտակար լինել մեկ փաստ: Հայտնի է, որ հայոց արքան իշխան Հեթումին ձերբակալեց իր եղբոր Ներսես Լամբրոնացու մահվանից հետո: Ինչպես գիտենք՝ Ներսես Լամբրոնացին մասնակցեց հայոց արքայի թագադրության հանդեսին և մահացավ մոտավորապես 1198 թ. հուլիս ամսին: Եվ քանի որ այդ դեպքը տեղի է ունեցել թագադրությունից որոշ ժամանակ անց, ապա առավել հավանական կարող է լինել այն տեսակետը, որ Լամբրոնի Հեթումյանների հնազանդեցման գործը Լևոն Մեծագործը կիրառեց մոտավորապես 1198 թվականի վերջերին կամ էլ 1199 թվականին:

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 217:

<sup>2</sup> Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, սյուն 1817:

<sup>3</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 265:

**ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ ԼԱՄԲՐՈՆԻ  
ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

*Արամ Հովհաննիսյան*

*Բանալի բառեր՝ Հեթում, Կիլիկիա, Լամբրոն, իշխան, հեղափոխություն, ամրոց, աղբյուր, գիտական գրականություն, Լևոն Մեծագործ, գրավել, հնազանդեցում, թագավոր, իշխանություն:*

Հոդվածը նվիրված է Կիլիկյան Հայաստանի հիմնադիր արքա Լևոն Մեծագործի և Լամբրոնի տիրակալ Հեթումի հարաբերություններին: Առաջին անգամ պատմագիտական գրականության մեջ փորձ է արված միջնադարյան սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնելու երկկողմ հարաբերություններ և դրանց միջև եղած խնդիրների պատմությունը: Այնուհետև ներկայացված են հայոց արքայի կատարած այն դիվանագիտական քայլերը, որոնց արդյունքում նա առանց կռվի կարողացավ գրավելու Լամբրոնի բերդը և իրեն ենթարկեցնելու Լամբրոնի Հեթումյաններին: Մի խնդիր, որը չկարողացան ժամանակին իրականացնել հայոց արքայի հորեղբայրը և եղբայրը: Հոդվածի վերջում էլ փորձ է արվում ներկայացնելու հայոց արքայի և Լամբրոնի նախկին տիրակալ Հեթում իշխանի հաշտեցման մանրամասները:

**ОБ ИСТОРИИ ВЗАИМООТНОШЕНИЙ ЛЕВОНА МЕЦАГОРЦА  
И ВЛАДЕЛЬЦА ЛАМБРОНА ГЕТУМА**

*Арам Оганесян*

*Ключевые слова: Гетум, Киликия, Ламброн, князь, исследовавший, крепость, источник, научная литература, Левон Мецагорц, завоевать, подчинение, король, княжество*

Данная статья посвящена взаимоотношениям основателя Киликийской Армении царя Левона Мецагорца и владельца Ламброна Гетума. Впервые в историографической литературе предпринята попытка на основе средневековых источников представить это двустороннее взаимоотношение и причины его неопределенности. Далее представляются результаты обстоятельного рассмотрения дипломатических стратегий и тактик, посредством которых царь сумел подчинить себе Гетумидов Ламброна и завоевать неприступную крепость – то, чего не удавалось его брату и дяде. В конце статьи предпринята также попытка представить обстоятельства и причины примирения сторон и их будущего взаимодействия.

**FROM THE HISTORY OF THE RELATIONSHIPS BETWEEN LEVON METSAGORTS  
AND MASTER HETUM OF LAMBRON**

*Aram Hovhannisyan*

**Keywords:** *King, Cilicia, Leon, Lambron, castle, Hetum, kingdom, ruler, troops, achive, come, relation*

The article considers the relationships between Levon Metsagorts , the founder of cilician Armenia, and Master Hetum of Lambron. It is the first time that there has been made an attempt to introduce both the two-sided relationships and the reasons why they became tensed based on the resources existing in the literature on history. There has also been made an attempt to give a detailed reasoning to the fact how the king managed to subject the Hetumyans of Lambron and to get control of the stronghold that failed to do his brother and uncle. At the end of the article there has been tried to manifest the fact how both sides could come to agreement and collaborate with each other in the future.